ԶՎԱՐԹՆՈՑԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԸ

Զվարթնոցից հայտնաբերած խեցեղենը առանձին քննության առարկա չի հանդիսացել։ Դվինի և Անիի նյութի քննության առնչությամբ նրան անդրադարձել են Բ. Շելկովնիկովը, Կ. Ղաֆադարյանը, Բ. Առաքելյանը։ Բ. Շելկովնիկովը գտնում է, որ Զվարթնոցի թանգարանում պահվող չնարակապատ խեցեղենի նմուշների գտնվելու վայրը անհայտ է և հնարավոր է համարում, որ վերջիններս հայտնաբերվել են Դվինում։ Նա գրում է. «Եթե դրանք հայտնաբերվել են Զվարթնոցում, ապա այդ վկայում է միայն այն մասին, որ քննարկվող առարկաները դեռևս IX դարում Դվինից բերվել են Զվարթնոց»։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ Զվարթնոցի խեցեղենը դեռևս խաչիկ վարդապետ Դադյանի ժամանակներից բերվել է Դվինից և խառնվել Զվարթնոցի նյութերին[3]։ Պրոֆ. Բ. Առաքելյանը գրում է. «Զվարթնոցի խեցեղենը ինքնատիպ է, ինչպես անոթների ձևով, գերազանցապես ափսեներ, որպիսի և ոչ մի օրինակ չի գտնվել Դվինում, նույնպես և բուսական ոճավորված օրնամենտներով։ Այդ ամենը նկատի առնելով կարելի է կարծել, որ միջին դարերում կրկին քաղաք դարձող Վաղարշապատը նույնպես կարող էր խեցեղենի իր սեփական արտադրությունն ունենալ, հակառակ դեպքում պետք է ենթադրել, թե այդ խեցեղենը բերված է ինչ որ անհայտ կենտրոնից»[4]։

Մատենագրության մեջ բազմիցս հիշատակություններ կան Վաղարշապատ քաղաքի մասին, իբրև Արարատյան դաշտի տնտեսական, հոգևոր և քաղաքական կենտրոնի։ Ամենայն հավանականությամբ V—VII դդ. և հետագայում Վաղարշապատը հանդիսացել է ոչ միայն շինարարական խեցեղենի, այլև ընդհանրապես խեցեղենի արտադրության խոշոր կենտրոն։ Զվարթնոցում ցուցադրված նյութերը ուղղակիորեն հաստատում են այդ ենթադրությունը։

Զվարթնոցի միջնադարյան խեցեղենը ստորաբաժանվում է հետևյալ խմբերի. շինարարական, հասարակ և զարդարուն չնարակապատ։ Նյութի ընձեռած հնարավորության սահմաններում ստորև քննության կառնենք այդ խմբերն առանձին առանձին։

Շինարարական խեցեղեն.—Զվարթնոցի խեցեղենի հավաքածուներում զգալի տեղ է գրավում շինարարական խեցեղենը՝ տարբեր ձևի և չափի հարթ և կիսաշրջան կղմինդրներ ու կավե խողովակներ, որպիսիք հայտնի են նաև Բանայից, Երերույքից, Արուճից և այլ հնավայրերից (նկ. № 1)։ Զվարթնոցի կղմինդրներն ունեն քառանկյուն եզրագծեր, ստորին մասում արտահայտված խիստ նեղացումով, որը մի կղմինդրը մյուսի մեջ հագնելու համար հատվածք ունի։ Կղմինդրներն ունեն ոչ շատ բարձր՝ 3—5 սմ եզրեր։ Վերջիններիս հարթ մակերեսի վրա գրսից սրված են ակոսներ, որոնք ուղղություն են տալիս անձրևաջրին։ Հարթ կղմինդրների երկարությունը 36—42 սմ է, լայնությունը՝ 32—36 սմ, հաստությունը՝ 2,8—3,2 սմ, որը համընկնում է Դվինի[5], Կարմրավորի ծածկի կղմինդրների, ինչպես նաև Խերսոնեսի[6] ժամանակամերձ կղմինդրների չափերի հետ։ Կղմինդրները պատրաստվել են փայտե կաղապարների մեջ և վառ կարմիր թրծվածք ունեն։ Հարթ կղմինդրների բազմաթիվ նմուշների վրա նշմարվում են կարմիր ներկով արված երկրաչափական զարդեր, որպիսիք հանդիպում են նաև Դվինի նմուշների վրա։ Վերջիններս, հավանաբար, վարպետի նշաններն են[7]։ Դվինի V—VII դդ. հարթ կղմինդրների տեսանելի մասերը ներկված են կարմիր դույնի ներկով[8]։ Զվարթնոցում և Հայաստանի այլ հնավայրերում հայտնի ծածկի կղմինդրները հետաքրքրական են ոչ միայն իբրև խեցեղեն արտադրանք, այլև շինարարական տեխնիկայի առանձին կողմերի բացահայտման տեսակետից։ Կղմինդրներն իրենց հարթ մակերեսի կենտրոնում ունեն ուռուցիկ անցքավոր ելուստներ, որոնք ծառայել են 7—10 սմ երկարությամբ ուռուցիկ գլխիկ ունեցող գամերով կղմինդրը ծածկին ամրացնելու համար։ Այդ գամերը պահպանվել են հարթ կղմինդրների բազմաթիվ նմուշների վրա։

---

1 Ցուցադրված է Զվարթնոցի թանգարանում։

2 Б. Шелковников, Керамика и стекло из раскопок гор. Двина, „Труды ГИМ Арм. ССР", т. IV, 1952, էջ 38։

3 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 39։

4 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1958, էջ 234—235։

5 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 229—233։

6 А. Л. Якобсон, Средневековый Херсонес, МИА, № 17, М—Л, 1950, էջ 118։

7 Նույն տեղում, էջ 120—121։

8 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 231։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում կիսաշրջանաձև կղմինդրները (երկարությունը 39 սմ, բարձրությունը 14 սմ)։ Սրանք իրենց մեջ էին ամփոփում կողք կողքի դրված հարթ կղմինդրների եզրերը, որոնք լցվում էին շաղախով։ Կիսաշրջանաձև կղմինդրները, հարթ կղմինդրներն իրենց մեջ առնելով, շենքի ծածկը անջրաթափանց էին դարձնում. օգտագործվում էին նաև գեղագիտական նպատակներով, շենքի ծածկը ձևավորելու համար։ Հետաքրքրական է Զվարթնոցի թանգարանում ցուցադրված № 53 կղմինդրների կոմպլեքսը. երկու հարթ և մեկ կիսաշրջանաձև կղմինդրներն իրար են միացած շաղախով. իրարից 2—3 սմ հեռավորության վրա դրված երկու հարթ կղմինդրների միջի տարածությունը լցված է շաղախով, որի վրայից դարձյալ շաղախով ամրացված է կիսաշրջանաձև կղմինդրը (նկ. 1)։



Նկ. 1. Հարթ և կիսաշրջանաձև կղմինդրներ (Զվարթնոց, VII դ.)

Զվարթնոցի կիսաշրջանաձև կղմինդրների մի քանի նմուշներ ունեն զարդարուն ճակտոններ։ Այսպես, № 62 (կարմիր կավից, կիսաշրջանաձև, 20 սմ երկարությամբ և շուրջ 14 սմ բարձրությամբ) կղմինդրի բեկորի վրա պահպանվել է եռանկյունաձև ճակտոնը։ № 63 կղմինդրի ճակտոնի վրա (բարձրությունը 11,6 սմ, պահպանված մասի երկարությունը 9 սմ, հաստությունը 1,4 սմ) ձեռքով դեռևս խեցու թաց վիճակում արված են հավասարաթև խաչ հիշեցնող զարդը և երկթևք գծեր։ Կղմինդրի մակերեսի վրա նշմարվում են ներկի հետքեր։ Հավասարասրուն եռանկյուն հիշեցնող զարդը վերարտադրված է № 64 կիսաշրջանաձև կղմինդրի ճակտոնի վրա։ Մարդու դիմապատկերը վերարտադրող զարդարուն ճակտոններից հետաքրքրական է № 59 կղմինդրի բեկորը։ Ճակտոնով կղմինդրները ծառայում էին կառույցի ծածկի ստորին վերջավորվող մասը զարդարելու համար։ Զվարթնոցի կղմինդրների թվագրումը որևէ կասկած չի հարուցում, վերջիններս տաճարինն են և թվագրվում են VII դ. կեսով։

Զվարթնոցի, Կարմրավորի, VII դարի այլ հուշարձանների ծածկի կղմինդրների և այլ հարակից նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ կղմինդրները Հայաստանում օգտագործվել են IV—IX դդ.։ IX դարից սկսած լայն կիրառություն է ստանում ծածկը կղմինդրաձև քարե սալիկներով պատելը, որը, ի տարբերություն հարթ և կիսաշրջանաձև կղմինդրներով կազմվող ծածկի, ավելի գեղեցիկ է և դիմացկուն։

Ինչպես ցույց է տալիս նյութերի քննությունը, կղմինդրների արտադրությունը Հայաստանում V—VII դդ. կրել է մասսայական բնույթ, ամենամն հավանականությամբ ինչպես Դվինը, այնպես էլ Զվարթնոցը կղմինդրների և ընդհանրապես խեցեղենի արտադրության առանձին կենտրոններ են եղել։ Զվարթնոցի շինարարական խեցեղենի մեջ հետաքրքրական են նաև տաճարին ժամանակակից բաղնիքի պատերի մեջ պահպանված տարբեր տրամաչափի ջրատար խողովակները (փողրակները), որոնց զուգահեռները գտնում ենք Դաունիում և Դվինում։

Հասարակ խեցեղեն.—Զվարթնոցի պեղումներից հայտնաբերվել են նշանակալից թվով կարասների, ճրագների, սեղկամանների, կափարիչների նմուշներ, որոնք իրենց վրա կրում են միջնադարյան հնավայրերից հայտնի զարդամոտիվներ, մասնավորապես հիշեցնում են Դվինի և Անիի հասարակ խեցեղենի զարդամոտիվները։ IX—X դարերով թվագրվող կարասի բեկորներից ուշագրավ են № 155 և № 156 զարդարուն կարասների բեկորները, որոնց վրա արված են սեպաձևեր, և № 162 կարմրաներկ փայլեցրած զարդարուն կարասի բեկորը, որի գոտու վրա դրոշմով վերարտադրված է այծի պատկեր։ Ուշադրության արժանի է նաև № 147 կափարիչի բեկորը, որի եզրի մոտ շուրջ 4 սմ տրամագիծ ունեցող կլոր դաջով դրոշմված է թռչնի, ակնհայտորեն աքաղաղի, ուռուցիկ պատկեր։ Դրոշմով սիրամարգերի պատկերներ են վերարտադրված № 153 կարասի բեկորի վրա։

Զվարթնոցի խեցանոթներից հետաքրքրական են մասնավորապես ձևավոր անոթների շրթնամասերը և բռնակները. № 176 բռնակը հիշեցնում է ձկան գլուխ, որի աչքերն ու թեփուկները արտահայտված են ցայտուն կերպով։ Ձևավոր անոթներից № 191-ի վրա վերարտադրված է արծվի պատկեր։

Պեղումներից հայտնաբերված է նաև գիտական գրականության «սեղկամաններ», «ձվաձև անոթ», «սֆերոկոնիկ անոթ» անուններով ծանոթ խեցանոթների բեկոր (№ 150), որն իր խեցու հնչունությամբ, ծանրությամբ և զարդամոտիվներով հիշեցնում է Անիի զարդարուն նմուշները։ Ինչպես հայտնի է, այս անոթների կիրառության վերաբերյալ հայտնվել են բազմաթիվ այլազան կարծիքներ[9], որոնք խիստ թեական են։ 1957 թ. Թեհրանում հրատարակված Արդեբիլ Ֆագրլ-խորեյշ—իբն-Իբրահիմ Թիֆլիսիի «Տեխնոլոգիաների նկարագիրը» («Բիան-աս-Սանաաթ») աշխատության մեջ այն կարծիքն է հայտնված, թե այդ ամանները ծառայել են իբրև քիմիական արտադրության անոթներ[10]։ Ակներևաբար նյութերը վաճառքի են հանվել նույն ամաններով, որոնք այդ նյութի համար տարա էին ծառայում, որտեղից և հասկանալի է այդ անոթների հարուստ հարդարանքը։ Ամանները կրում էին նաև տարբեր նշաններ և արձանագրություններ։

Ջնարակած խեցեղեն.—Զվարթնոցի թանգարանում ջնարակած խեցեղենի վաղ նմուշները ցուցադրված են IX—XIII դդ. խեցեղենի շարքում։ Բերենք ամենարնորոշ նմուշների նկարագիրը (նկ. 2, 3). № 131 ցածր շրջանաձև հատակով ափսեի բեկորի (չափսերը՝ 13,1×12,3 սմ) հատակի վրա վրձինով տարված են զուգահեռ գծեր, որոնց միջև կա պարուրաձև զարդ և ապակետեր ու բլթակներ։ Գծերն ու բլթակները վերարտադրված են մուգ դարչնագույն ջնարակով (մարգանեցի օքսիդ), զուգահեռ գծերի երկու կողմերում արված են բացվող կոկոնը հիշեցնող զարդեր, որոնք եզրագծված են կետաշարով։

Ջնարակապատ անոթների վաղ նմուշներից հետաքրքրական է № 129 պնակի բեկորը (չափսերը՝ 14,5×12 սմ, խեցու հաստությունը 1,2 սմ, հատակի տրամագիծը 13,3 սմ)։ Պնակն անգորված չէ, նկարն արված է թաց խեցու վրա։ Բաց մանիշակագույն ֆոնի վրա վերարտադրված է 4 պսակաթերթանի վարդյակի մոտիվը։ Պսակաթերթերը եզերված են մուգ դարչնագույն գծերով։ Վերջիններիս մակերեսը պատված է դեղին գույնի ջնարակով։ Պսակաթերթիկների միջև ընկած տարածությունում մուգ դարչնագույն գծերով եզերված են շեղանկյունաձև զարդեր, որոնց մակերեսը պատված է կանաչ գույնի ջնարակով։ Պնակը գրեթե հարթ շրջանաձև հատակ ունի։

---

[9] Э. Ленц, О глиняных сосудах с коническим дном, находимых в пределах мусульманского Востока. ЗВОРАО, т. XV, СПб, 1904, 8. З. Виноградов, Сфероконические сосуды с узким горловым отверстием, „Казанский музейный вестник", 1922, № 2. Р. М. Джаиполадян, Сфероконические сосуды из Ани, СА, 1958, № 1.

Հ. Ջանփոլադյան, Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. 3, Երևան, 1950, էջ 147—167։ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 200—207։

[10] О. Л. Вильчевский, Сфероконические сосуды в переднеазиатском трактате по прикладной технологии XII века. СА. 1961, № 2.

Նկ. 2. Ջնարակված խեցեղենի բեկորներ (Զվարթնոց, VIII դ.)

Նկ. 3. Ջնարակված պնակի բեկորներ (Զվարթնոց, VIII դ.)

N 133 (չափերը՝ 11×13,2 սմ) ցածր շրջանաձև հատակով անոթի բեկորի ներսից հատակի վրա արված են բուսական ոճավորված զարդեր, ինչպես նաև ցայտրելու Ջնարակը մեզ է հանձնաժողովն է։ N 130 (չափերը՝ 11,2×10 սմ, խեցու հաստությունը 1 սմ) խեցեղենի հատակի մասում կանաչ և դարչնագույն մեկընդմեջ գծերով արված եռանկյունին բաժանված է փոքր քառակուսիների, որոնց մեջ չամմատակերպ արված են ձվաձև զարդեր կանաչ և դարչնագույն ջնարակով։ Նման զարդամոտիվներով խեցեղեն հայտնաբերվել է Դվինում (նկ. 4), Դառնիում, Փայտակարանում։

Սլաքներով զարդարված Դվինի ջնարակած խեցանոթն է հիշեցնում Զվարթնոցում ցուցադրված № 122 կավանոթի բեկորը։ Մուգ շագանակագույն ֆոնի վրա զուգահեռ և ուղղահայաց գծերի հատումով արված քառակուսիների մեջ վերարտադրված են նետի սլաք հիշեցնող զարդեր։ № 136 շրջանաձև հատակով ափսեի բեկորի (չափսերը՝ 13×11,2 սմ) անգորի վրա դարչնագույն, կանաչ, դեղնավուն ջնարակով արված է եռանկյունի, նրա մեջ շրջանաձև զարդեր, ընդորում յուրաքանչյուր շրջան իր մեջ ունի դեղին փոքր բլթակներ և բոլորվում է մանր կետերով։ Նման բեկորներ հայտնի են նաև այլ վայրերից[11]։



Նկ. 4. Ջնարակված խեցեղենի նմուշներ (Դվին, կենտրոնական թաղամաս)

Դվինի կենտրոնական թաղամասից, 1938 թ. պեղումների ժամանակ V—VII դդ. կառույցների փլատակներում գտնվել են վերը նկարագրված խեցեղենի նման բեկորներ։ Հայտնաբերված նյութերի մեջ (ապակե թասի բեկոր, անզարդ հասարակ խեցեղեն) գտնում ենք նաև արաբական, ոստիկանի կտրած VIII դարի դրամներ «արմենիա» մակագրությամբ, որոնք առավել հավաստի են դարձնում այդ խեցեղենը VIII դ. թվագրելը։ Հետաքրքրական է № 109 պնակի շրթի բեկորը։ Դարչնագույն գծերով, թաց խեցու վրա արված է թերևս ղուշանի մոտիվը հիշեցնող զարդ։ Նմանօրինակ զարդեր մենք հանդիպում ենք Դվինի վաղ ջնարակած խեցեղենի հավաքածուում, ինչպես նաև զարգաքանդակներում։

Վերը նկարագրված նմուշներն ունեն լայն, հարթ, շրջանաձև հատակ, որը հատուկ է խեցեղենի վաղ նմուշներին, և գեղագարդված են թե՛ առանց անգորի (№ № 131 և 109) և թե անգորով պատելու տեխնիկայով։

Զվարթնոցի խեցեղենի հավաքածուներում նշանակալից քանակ են կազմում IX—XIII դդ. խեցեղենի նմուշները, որոնց մեջ գտնում ենք ինչպես Դվինից ներմուծված գծազարդ, փորագիր, անգորի հեռացման տեխնիկայով զարդարված անոթներ, այնպես էլ թերևս Անիից ներմուծված պնակների և ջնարակապատ այլ խեցանոթների նմուշներ։ Այս թվականներին վերաբերող խեցեղենի շատ օրինակներ սոսկ ընդհանուր գծերով են հիշեցնում միջնադարյան Հայաստանի առևտրի և արհեստագործության այդ նշանավոր կենտրոններին՝ Անիի և Դվինի խեցեղենը և մեր կարծիքով տեղական արտադրանքի նմուշներ են։

---

[11] А. Л. Якобсон, Художественная керамика Байлакана, МИА, № 67, М—Л, 1959, էջ 240, ա գ. 17։

Հնագիտական և մատենագրական նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանում ջնարակած խեցեղենի վաղ նմուշները ամենայն հավանականությամբ պատկանում են VIII դ.։ Զվարթնոցի խեցեղենի քննությունը ցույց է տալիս, որ Զվարթնոցն ունեցել է խեցեղենի սեփական արտադրություն։

Զվարթնոցում հայտնաբերված վաղ նմուշներին հաջորդող զարդարուն և ջնարակած խեցանոթների օրինակները հիշեցնում են Դվինի և Անիի պեղումներից հայտնաբերված նյութերը և հավաստի կերպով թվագրվում են IX—XIII դարերով։

Դ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ, Ա. ՔԱՎԱՆԹԱՐՅԱՆ

АРМЯНСКИЙ МОНАСТЫРЬ XIV ВЕКА БЛИЗ БЕЛОГОРСКА В КРЫМУ

Армянская колония в Крыму возникла, вероятно, еще в XI в. — в период нашествия в Армению турок-сельджуков, принесших стране тяжкие испытания. Однако основная масса эмигрировавших направилась тогда в южные районы Малой Азии (в Киликию), где затем образовалось Киликийское княжество Рубенидов, а в Крым, по-видимому,— лишь незначительная часть армян.

Несравненно сильнее была волна армянской эмиграции в Крым во второй половине XIII, в XIV и в XV вв. Армяне, особенно городское население, массами покидали родину: в XIII в. они спасались от монголов, в XIV в.—от опустошавших страну персов, позднее—от туркменских племен, в конце XIV и начале XV в.—от громивших Армению полчищ Тимура. Обосновываясь в городах Крыма, армяне довольно скоро заняли видное положение в торгово-ремесленной и политической жизни края, особенно в городах его восточной части. В XV в. в наиболее крупном из них — Кафе (совр. Феодосия), являвшейся тогда столицей Крыма, армяне составляли уже две трети 70-тысячного населения города.

Для изучения исторических судеб армян в Крыму важно использовать памятники их материальной культуры. Они не только дают представление о монументальном и прикладном искусстве крымских армян, но и отражают самые различные стороны их жизни в Крыму, носят на себе печать острой социальной борьбы внутри армянской общины, свидетельствуют о продолжающихся связях с родиной и косвенно о взаимоотношениях с властителями восточнокрымских городов — с генуэзцами.

Наиболее выразительны в этом отношении памятники средневекового армянского зодчества, сохранившиеся в Кафе, близ Солхата (совр. Старый Крым) и в других местах восточного Крыма. Эти памятники уже являлись предметом исследования[1]. Мы пришли к выводу, что первоначально армянская монументальная архитектура в Крыму довольно точно следовала родным образцам, хотя и в значительно упрощенном виде и с теми неизбежными отклонениями, которые вызваны были применением местных строительных материалов и связанной с ними местной строительной техники бутовой кладки[2]. Таковы купольная церковь 1338 г. монастыря Сурб-хач близ Солхата или купольная же церковь 1348 г. Иоанна Крестителя в Кафе (в районе нынешнего Карантина).

С течением времени верхушка армянского общества — богатое армянское купечество, стремясь укрепить свое положение,— все более сближалось с генуэзцами, экономически и политически господствовавшими в Кафе. Внешним выражением этого сближения была уния армянской и католической церкви, заключенная на Ферраро-Флорентийском соборе 1438—1439 гг., хотя союз генуэзской и армянской буржуазии определился еще до того, не позднее начала XV в. Латинизация армянской церкви, несомненно, спо-

---

[1] А. Л. Якобсон. Армянская средневековая архитектура в Крыму. «Византийский временник», VIII, 1956, стр. 166—191.

[2] Подробнее см. там же, стр. 173 сл.